

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆՇԽԱՐ ԵՐԳ՝ ԱՅՆՃԱՐԷՆ ԵՒ 1940ԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԷՅՐՈՒԹԷՆ ՈՒ ՄԻՔԱՆԻ ԱՅԼ ՅԱՆԳԱԻՈՐ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ/ԵՐԳԵՐ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

Ա.- Հարսնցուի ծնողական տունէն հարս ելլելու երգ

Մուսա լեռ-Այնճարը, արեւմտահայութեան այն հազուագիտ բնակավայրերէն է, որոնց ազգագրական հարուստ աւանդէն համեմատաբար բաւական բան փրկուած՝ կը շարունակէ կենցաղավարել մերօրեայ այնճարցիներու կեանքին մէջ: Մուսալեռցիք, վերահաստատուելով Այնճար, գիւղական նոր պայմաններուն պատշաճելով, ներամփոփ կեանքով շարունակած են իրենց պապենական կենցաղի, աւանդութեանց եւ ազգագրական բնոյթի որոշ պարագաներ կիրառել առօրեայ կեանքին մէջ: Միաժամանակ, անոնք հետզհետէ թուղթին յանձնած են մուսալեռեան խոհանոցին, բառ ու բանին, երգ ու պարին, ազգագրական անցեալի աւանդին նշխարներնէն շատ բան¹: Հուսկ, անոնք հիմնած են ազգագրական թանգարան՝ իրենց գիւղին մէջ²:

Ստորեւ կը հրատարակենք մուսալեռեան ազգագրական երգերէն մին, որ կը վերաբերի հարսնցուին ծնողական տունէն հարս ելլելու արարողութեան:

Այս երգը մասնակիօրէն հրապարակուած է³, սակայն նկատի առնելով որ տպագրեալ տարբերակին մէջ հրատարակուած է երգին միայն մէկ տունը, այստեղ զայն կը հրատարակենք աւելի ծաւալուն բնագրով եւ այլ՝ Վիք-

¹ Մուսա լեռն եւ Այնճարի փոհմիկ ճաշեր, հրատ.՝ Ս. Պօղոս եկեղեցւոյ տիկնանց միութիւն, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, Պէյրութ, 2009:

² Թանգարանին բացումը կատարուած է Սեպտեմբեր 2019ին:

³ Տե՛ս՝ Մուսա լեռն եւ Այնճարի երգարան (Յաւերժ Մուսալեռ Մուսա լեռն եւ Այնճարի երգարան), խմբ. Շաղիկ Գէորգեան, [ա.տ.], 2019, էջ 10:

թորիա Գէորգեանի կատարմամբ ներկայացուած երաժշտութեամբ⁴: Երաժշտութեան վերծանումը կատարեցին Աստղիկ Սահակեան եւ Հեղինէ Սարգսեան (Երեսան):⁵

Ստորեւ՝ երգը:

Հէյ Եատա Հէյ Եամա	Հէյ հայրս, հէյ մայրս ⁶
Թմկընէն կու զարկըվէն ույու զուռնինէն Աշգօար ձէնը սա՛գուծ կա՛պուծ՝ նռնինէն:	Թմբուկներն ու զուռնաները կը հնչեն, Դեղնաւուն զարդարուած ձին կապուած է նռնենիէն:

⁴ Երգը արձանագրեցինք 24 Յունիս 2023ին, Այնճար, Վիքթորիա Գէորգեանի տան մէջ: Վիքթորիա Քենտիրճեան-Գէորգեան ծնած է Այնճար, Պիթիաս թաղամաս, Յունիս 1959ին պիթիասցի ծնողքէ: «Մայրս՝ Ռուբինա Քերքէզեան (Պիթիաս, 1935--Այնճար, 2021), շատ լաւ ծայն ունէր: ...Չորս փարեկանին գաղթական ելեր է Մուսա լեռէն: [Այնճարի մէջ], դրացուիին իրեն ըսեր է որ "շատ լաւ կ'երգեսկոր, եկուր քեզի այս երգը սորվեցնեմ, երբոր մէկը հարս պիտի ելլէ՝ դուն կ'երգես": Մայրս կը պատմէր որ զինք կը կանչէին՝ "ես ալ համարձակ-համարձակ կ'երթայի կ'երգէի": Երգելէն ետք կու գար հպարտ-հպարտ կը պատմէր [մեզի]: Անգամ մը պատմեց որ մէկու մը համար երգեր է, բայց հարսը այնքան դժգոհ է եղեր իր ծնողական փունէն (որովհետեւ խորթ մօր մը ձեռքը մնացեր է), որ կ'ըսէր՝ "3 անգամ պերիցի իրեն" չլացաւ": Ինք երբ երգէ եղեր հարսնցուն կու լայ եղեր, այս հարսնցուն չէ լացած: **Պիթի** կը նշանակէ երգը երգել որ լա՛յ: Մեծմայրս շատ լաւ կ'երգէր. ժառանգական է, Տէր Մեսրոպ քահանայն (Քերքէզեան) քեռիս է, շատ լաւ կ'երգէ, անոր ալ ծայնը շատ լաւ է: Ընտանիքով, բոլորը լաւ կ'երգէին, բայց մայրս թէ՛ միութենական եւ թէ՛ եկեղեցական երգեր կ'երգէր: Մայրս [երգչախումբէ] չէ [երգած], բայց ես երգած եմ Համազգայինի Այնճարի Կոմիտաս երգչախումբէն, մենակապար եղած եմ, մեր Ս. Պօղոս եկեղեցին դպրութիւն ըրած եմ 12 փարեկանէս իվեր»:

«...Մօրմէս խնդրեցի որ ինծի սորվեցնէ ասի, որպէսզի եթէ պէտք ըլլայ՝ [երգեմ]: ...Ամուսինս [Մուսալեռան ազգագրական երգ ու բանը հաւաքող] խումբին մէջն էր, կը հաւաքէինկոր այս երգերը, ըսի [մօրս] վաղը պէտք կ'ըլլայ, գոնէ սորվեցուր ինծի, առիթ մը ըլլայ եթէ՛ փեղդ կրնամ լեցնել: Այդպէս ալ եղաւ: Մամաս միշտ երգ կը մըմնջէր՝ աման լուացած, ճաշ եփած, գործ ըրած ապենը: Ուրիշ երգեր ալ կ'երգէր, «Խնկի ծառին»ը իր ամենասիրած երգն էր: Ամէն առօրու, կէսօր, իրիկուն շարական ալ կ'երգէր, բայց ասանկ բաներ ալ [կ'երգէր]»:

⁵ Այս առթիւ յատուկ շնորհակալութիւն Զաքար Քէշիշեանին:

⁶ Թարգմանութիւնը՝ Եսայի Հաւթեանին, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը: Հաւթեան վերստուգեց նաեւ բառերն ու բարբառային հնչիւնները:

⁷ **Ծնթ. թարգմանիչին.** - ա՛ր արաբերէն ի հնչիւնը, գօ արաբերէն կոկորդային Յ հնչիւնը:

Հէյ եամա-եամա, էմ հիքէն եամա, Գիշըրնէէր քննիդ մնա՛ցիր, Յիրըկնէէր բա՛նիդ մնա՛ցիր, Քը նազը ա՛շկընէն խաթըրն իրիր, Բա՛րը մնուս, շին մնուս:	Հէ՛յ մայրս, մա՛յրս, ի՛մ հոգին մայրս, Գիշերուան քունէդ մնացիր, ցերեկուան գործէդ մնացիր, Քու քնքուշ աղջկանդ փափաքը ըրիր, Բարով մնաս, շէն մնաս:
Հէյ եափա-եափա, էմ հիքէն եափա, Գիշիրը-ցիրէյը միմը իրիր, Քը նազը ա՛շկընէն խաթըրն իրիր, Բա՛րը մնուս շին մնուս:	Հէ՛յ հայրս, հա՛յրս, ի՛մ հոգին հայրս, Գիշերը-ցերեկը մէկ ըրիր, Քու քնքուշ աղջկանդ փափաքը ըրիր, Բարով մնաս, շէն մնաս:
Հէյ ախբար-ախբար, էմ հիգէն ախբար, Շերութ մը եարանջ Սուլթանը պազուրը Գէցիր, ծունտը-ծունտը գօումաշնէն կտրըցուցիր, Քը նազը քորըր խաթըրն իրիր, Բա՛րը մնուս, շին մնուս:	Հէ՛յ եղբայր, եղբայր, ի՛մ հոգին եղբայր, Շաբաթ մը առաջ Սուլթանի շուկան Գացիր, ծանր-ծանր կտաւները կտրեցուցիր, Քու քնքուշ քրոջդ փափաքը ըրիր, Բարով մնաս, շէն մնաս:
Իլ ֆա՛րճի եամա, Ֆա՛րճի եշիլ պայրաքնէն, Շա՛քրու, միղրու ծարուծ, Վուրդիդ առէն կու տա՛նէն:	Ելիր տես, մա՛յրս, Տես կանաչ դրօշակները, Շաքարով-մեղրով մեծցուցած Վարդիդ առին կը տանին:
Խմի եամա, խմի քիւղըր գինինէն, Թըղ ուղայի իչուցիդ ա՛ղը արցնքնէն:	Խմէ՛ մա՛յրս, խմէ՛ քաղըր գինիները, Թող հոսին աչքերէդ աղի արցունքները:
Խմի եափա խմի, քիւղըր սիկարինէն, Թըղ կտրա միջուցիդ ա՛լիպա՛ պա՛քերինէն:	Ծխէ՛ հա՛յրս, ծխէ՛ քաղըր սիկարէթները, Թող կտրուին մէջքիդ միացած ⁸ ողները:
Խմի եափա խմի, քիւղըր գինինէն, Ծարիցիր մինցուցիր, առէն կու տա՛նէն:	Խմէ՛ հա՛յրս, խմէ՛ քաղըր գինիները, Կերակրեցիր-մեծցուցիր առին կը տանին:
Թմկընէն կու զարկըվէն ույու զուռնինէն, Աշգօար ձէնը սա՛գուծ կա՛պուծ նռնինէն:	Թմբուկներն ու զուռնաները կը հնչեն, Դեղնաւուն զարդարուած ծին կապուած է նռնենինէն:


Բ.- Մութեղին երգը (Մալարիա) եւ այլ երգեր

Այս երգը լսած էի մօրմէս՝ Վարդուհի Գազանճեան-Տագէսեանէն (1933-2016), 1960ականներու վերջ-70ականներու սկիզբին: Իր լուսաբանութեամբ, կ'ենթադրէի որ ան տարածուած պէտք է ըլլայ Լիբանանի որբանոցային միջավայրերուն մէջ: Վերջերս, մուսալեոցի այնճարաբանակ Վարդ-

⁸ Ծնթ. թարգամնիչին.- Ա՛լիտա՛, հաւանաբար՝ միացած:

շաքէ Չախչախեան⁹ ինծի ներկայացուց իր աշակերտական յուշատետրը¹⁰, ուր գտայ «Մալարիա» երգին բառերը: Ան երգեց երգը՝ ինծի ծանօթ եղանակով: Երգին առկայությունը Պեյրուֆի եւ Այնճարի մէջ, կը խօսի Լիբանանի հայաբնակ այլեւայլ վայրերու մէջ անոր տարածումին մասին:

Տեսորին մէջ կային միքանի բանաստեղծութիւններ եւս: Դժբախտաբար, ան չկրցաւ երգել զանոնք, բայց հաստատեց թէ անոնք եւս կ'երգուէին: Ստորեւ կը հրապարկենք այդ բոլորը, ընդգծելով որ ասոնք ճաշակ մը կու տան 1950ականներու լիբանահայ ընկերային-հաւաքական միջավայրին մէջ տարածուած երգերու, անոնց բնոյթին եւ արծարծած խնդիրներուն մասին:



Վարդշաքէ Չախչախեանի ձեռագրով գրուած «Մուծիչի երգը»

⁹ Վարդշաքէ Չախչախեան (ծն. Մուսա Լեռ, Խտըրպէկ, 1935): Իրեն հանդիպեցանք 1 Մայիս, 2022ին:

¹⁰ Չախչախեան ներկայացուց երկու տետր: Տեսորեւն առաջինին մասին ան ըսաւ. «1953ին, Այնճարի հայ աւեր. վարժարանի երրորդ դասարանի աշակերտ էի, պր. Ճորճ Սեպեւեանը Կիպրոսէն եկած էր մեզի իբրեւ ուսուցիչ: Ան թելադրեց որ դասագիրքէն մեր սերտած որեւէ հայ բանաստեղծի բանաստեղծութիւններէն տաս հարգրենք մեր տետրին մէջ, իր կենսագրութեան կողքին»: Իսկ երկրորդ տետրին մասին ան բացատրեց. «ասիկա յուշատետր է. դպրոցական տարիներուս (մինչեւ 8րդ դասարան գացած եմ դպրոց), սովորութիւն էր, դասընկերներ այսպիսի տետրերու մէջ յիշատակներ կը գրէինք իրարու» (անձնական հարցազրոյց, Այնճարի իր տան մէջ, 20 Յունուար 2024ին):

Մուծեղին երգը (Մալարիա) ¹¹	
Օր մը ես դուրս նստած Կը դիտէի մեր պարտեզը: Ամառ էր, հով չկար Արեւը մտած էր մար:	Յանկարծ գլխուս վերեւէն Վըզ, վըզ, վըզ, վըզ ծայն մ'եկաւ Մուծեղ մը ինքնահող Քրթիս վրայ փակաւ:
Վերջըն ալ տեսայ որ Բոլոր մարմինս կտորի կտոր Կարծես թէ, վրաս ծինեց Զիս սաստիկ դող մը բռնեց ¹² :	Զընկըր, զընկըր դողացի, Վերմակիս տակ սողացի Վերջըն ալ քրտինքին Մէջը լողացի:
Հարցուցի տղթորին, Մեծապատուութեան ¹³ նորին, Ըսաւ որ ասիկա Կը կոչուի մալարիա:	Ինձի տուաւ լեղի դեղ Եւ միքանի ասեղներ ¹⁴ Ըսաւ որ ասիկա Կը բերէ մուծեղ:

Զինուորին կորուստը	
Այս ինչ կորուստ, ինչ մեծ ցաւ Փանթալոնիս կոճակը Կոճկելիքէն փրթեցաւ Գնաց մտաւ ո՞ր ծակը: Թէ որ տեսաք զայն տեղ մը Իմացուցէք ո՞ր ծակն է Երթամ հանեմ զայն շուտով:	Ոչ պզտիկ էր, ոչ մեծ էր, Չափաւոր ալ չէր ըսուեր Ի՞նչ գոյն ըլլալն ալ մոռցայ Կարմիր էր թէ՞ սեւի վրայ: Ահ, կ'աղաչեմ պարոններ:
Այս կորուստը քիչ բան չէ Յիսնապետս որ իմանայ Վերջը բանիկս բուսած է: Գտէք, գտէք կոճակս գտէք:	Միտքս կու գայ թէ վրան Թռչուն մը կար խոշորկեկ Եւ կորուսեալ այդ կոճակն Գամուած էր հոս ամրկեկ:
Խանութները չեն ծախեր Երոպայէն չեն բերեր Շունշանորդի կոճակին	Զինափործին ատենը Կը դիտեն մեր չորս կողմը, Ոտքէս բռնէ մինչեւ վեր

¹¹ Մալարիան բաւական տարածուած էր 1930-50ականներու լիբանահայ ու - ըստ երեւոյթին սուրիահայ միջավայրերուն եւ թերեւս տեղաբնիկներուն մէջ եւս: Մալարիան մեծաթիւ զոհեր խլած է մուսալեռցիներէն՝ անոնց Այնճար հաստատման առաջին տարիներուն: Մալարիայի չարիքը այնքան մեծ եղած է որ անհրաժեշտ դարձած է բնակչութիւնը զգօս եւ զգուշ պահել անկէ: Այս առնչութեամբ ալ հրատարակուած է բժիշկ Յ. Յակոբեանի պատրաստած եւ Հայ ազգային բժշկական վերին մարմնին կողմէ հրապարակուած *Մալարիա*, 25 էջանի ուսումնասիրութիւնը (Ժողովրդական առողջապահական մատենաշար թիւ 1, Տպ. Նայիրի, Հալէպ 1946): Իղէպ, այս գրքոյկը ճանաչողական արժէք ունի եւ չ'ընդգրկեր մեր վերոնշեալ երգը:

¹² Այլ տարբերակ՝ «պատեց»:

¹³ Այլ տարբերակ՝ «վեհափառութեան»:

¹⁴ Այլ տարբերակ՝ «ետեւէն չորս հինգ ասեղ»:

Ծառն ու արմատն է չորցեր:	Կը խառնեն տեղ չեն ձգեր:
Կու տան ձեռքս հրացան, Կ'ըսեն շալկէ ոսիդ վրայ Ի՞նչպէս կայնիմ, դուք ըսէք՝ Փանթալոնս վար կ'իյնայ:	Բարեկամացս հանդիպիմ՝ Հարկաւ պիտի բարեւ տան Ձեռքս հոսկէ պակաս չէ: Պիտի տեսնեն ու խնդան
Աղջկանց ալ բան պէտք է Երբոր տեսնան կը խնդան Ճամբաս հարաւ փոխելով Թոչելու է պալոնով:	Պառաւ կանանց բերանն ալ Թէ կրնաս գոցել՝ գոցէ Անանկ բաներ կը մաղեն Որ կոճակս բամբասեն:
Սիրուիս ալ Աստուած տայ Այս կորուստը չիմանայ Քանզի գիտեմ վախկոտ է Պզտիկ բանէ մը դող կ'ելլէ:	Կեցէք, միտքս բան մ'եկաւ Վազեմ երթամ ճար չկայ Դիոգինէսն ու՛ր որ է Գուցէ կոճակս ան գտնէ:
Կրկն. Ահ կ'աղաչեմ պարոններ Չըլլայ երբեք զիս ծաղրէք	Օր կ'ըլլայ որ փրցընէք. Դուք ալ կոճակի տէր էք:

Տանտիկին կ'ուզենք¹⁵

¹⁵ Չախչախեանի նոթատետրին մէջ այս երգին մասին գրուած է թէ «գրի առնուած է մայրերու օրուան առթիւ, 1955 Մայիս»: Այս երգը կը գտնենք նաեւ Արմենակ Արըզեանի (Տատեր) հեղինակութեամբ *Հազար ու մէկ ծաղիկ* վերնագրեալ գիրքին մէջ (Պոստոն, տպ. Հայրենիք, 1913, 132 էջ): Գիրքը կազմողը՝ Արմենակ Արըզեան, որ գիրքին մէջ հանդէս կու գայ նաեւ Տատեր (=ընկեր) գրչանունով, 1 Դեկտեմբեր 1913 թուականը կրող իր «Յառաջաբան»ին մէջ շնորհակալութիւն կը յայտնէ Հալէպի առաջնորդ Ներսէս եպս. Դանիէլեանի աջակցութեան, կը նշէ թէ գիրքին հասոյթին 25%ը պիտի յատկացուի «Ձեյթունի հայ վարժարանաց», աւելցնելով որ գիրքը դրուած է Թրոյի Հայ Առաքելական եկեղեցիի հոգաբարձութեան տրամադրութեան տակ:

Գրքոյը կ'ընդգրկէ Արըզեանէն թրքերէն բանաստեղծութիւններ, տեսքաններ, հանելուկներ, խրատներ եւ այլ գրութիւններ՝ բոլորը թրքերէն: Գիրքին երկրորդ մասին մէջ կը հանդիպինք Դանիէլեան եպիսկոպոսի կաղանդէքներուն, նաեւ այլոց հայերէն ու թրքերէն չափածոյ գրութիւններուն: Այս խումբին մէջ կը հանդիպինք նաեւ Վեր. Կոստան Մոմճեանի գրած միքանի բանաստեղծութիւններուն, որոնցմէ մին է «Տանտիկին կ'ուզենք»ը, տպուած գրքոյկին 77-78 էջերուն: Շահեկան է այն որ 1910ականներուն շրջանառութեան դրուած բանաստեղծութիւն մը, որ շատ հաւանաբար երգուած ալ է, երգուած է նաեւ Այնճարի մէջ, 1950ականներուն: Բաղդատելէ ետք գրքոյկին բնագիրը այս ձեռագրին հետ, ի յայտ եկաւ որ ձեռագիրէն կը պակսի մէկ տուն:

Գրքոյկը մեր ուշադրութեան յանձնեց դոկտ. Արմէն Իւրնէշլեան որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը: Գրքոյկը մատչելի է համացանցի վրայ, հետեւեալ հասցէով.-

<https://books.google.com.lb/books?id=0odCAQAAIAAJ&pg=PA77&lpg=PA77&dq=%D5%8D%D5%A1+%D5%A4%D5%B8%D6%82%D5%BD%D5%BF%D6%80+%D5%B4%D5%A8%D5%B6+%D5%A7+%D5%A1%D5%A6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A1%D5>

[Վեր. Կոստան Մոմճեան]
Սա դուստրը մ'է ազնուատոհմ մեծատան Ուսած՝ ապրիլ կեանք մը փափուկ, պճնազարդ Ծնողք իր հետ մեծ գումարներ օժիտ տան, Թէ կամենամ կեանքի ընկեր ընտրել զայն: Բայց ականջիս տակ խօսի ինձ մի մեղմ ձայն՝ Բայց ականջիս տակ խօսի ինձ մի մեղմ ձայն՝ Կրկ. Մենք չենք ուզեր օժիտաւոր մ'օրիորդ. Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:
Եւ սա մին է գեղեցկադէմ, գեղանի Վեհ բնութիւնն կարծես օժտած է զանի Ահա քեզի գեղեցկութեան մի պատկեր Ալ ի՞նչ պակսի ընտրել զնէ ինձ ընկեր: Իսկ այն ձայնը կը փսփսայ ականջիս՝ Իսկ այն ձայնը կը փսփսայ ականջիս՝ Կրկն. Մենք չենք ուզեր սոսկ դէմքի փայլ սիրելի... Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:
Սա աղջիկ մ'է դպրոցական ուսանող, Ճարտար, խօսող, գրող, թէեւ չունի փող Դասատան մէջ փայլի որպէս մի արեւ, Ինձ ամէնէն յարմար կ'ինը արդարեւ: Բայց ականջիս միշտ կը զարնէ այն խոլ ձայն՝ Բայց ականջիս միշտ կը զարնէ այն խոլ ձայն՝ Կրկն. Մենք չենք ուզեր գրել կարդալ միմիայն Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:
Սա աղջիկ մ'է դիրքով, տեսքով ինչ խոնարի, Ոչ ուսանող, ոչ գեղանի, ոչ քնարահար Թէեւ՝ բայց նէ ընտանեկան Սուրբ յարկին Տակ՝ լաւ գիտէ ապրիլ որպէս տանտիկին: Չգիտեմ արդեօք ընտրելու՞ եմ նէ թէ՞ ոչ: Չգիտեմ արդեօք ընտրելու՞ եմ նէ թէ՞ ոչ: Յայնժամ այն ձայն մեղուկ մ'առնէ ինձի կոջ՝

[%BF%D5%B8%D5%B0%D5%B4+%D5%B4%D5%A5%D5%AE%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6&source=bl&ots=WYNiyqX6kF&sig=ACfU3U3U0Gmk2ofLnObvQJbk1dsKj-FDqw&hl=en&sa=X&ved=2ahUKEwjQg8_oI4uGAXXOUKQEHTG9CDcQ6AF6BAgJEAM#v=snippet&q=%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A5%D5%AC%D5%AB&f=false](#) :

Յայնժամ այն ծայն մեղուկ մ'առնէ ինծի կոչ.
Կրկն. Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք
 Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:

ՀԷՅ ԵԱՏԱ, ՀԷՅ ԵԱՍԱ

3 Թըմ - կը - նն կու գար - կը - վեն
 6 ու գուր - նի - նն աշ-գար ձե - նը
 9 սա - զուծ կա - պուծ նր - նի - նեն:
 12 Հի եա-մա, եա - մա, էմ հի-բես եա-մա
 15 գի - շըր - նե-ւեր ըն-նիդ մը-նա - ցիր ցի - րըկ- նե-ւեր
 18 քա-նիդ մը-նա-ցիր քը նագ-յը աշ - կը-նեն խա - թըրն ի -
 21 րիր քարը մը-նուս շին մը - նուս
 24 Հի եա-տա, եա-տա, էմ հի-բես եա-տա
 գի - շըր ցի-րկը մէյմ ի - րիր քը նագ-յը աշ - կը-նեն

27
 29
 32
 36
 39
 43
 46
 49
 52

խա-թըն ի-րիր քեր ան-նա շին մը-նա
 Հի ախ-բար, ախ-բար, եմ եի-գև ախ-բար
 շն - քուք մը ես-րուք Ասկ - թա-նը արա-քու-րը գե-ցիր
 ծուն-տոր ծուն-տոր գու-մաշ եկն կրտ - րը - ցու-ցիր
 քը նազ-ը քոր խա-թըն ի - րիր քարը մը-նա շին մը-նա:
 Իկ ֆար-մի եա-մա, ֆար - մի ե - ղի պայ - բար-
 նն շաղ-րու միշ-րու ծա - րած ֆար - ղիդ
 ա - ըն կու տա - նն: Խոր - մի եա-մա,
 իր - մի քիտ - ցը գե - նի - նն

53 թրդ ու- դա-լի չու - ցիդ ա - ղը ար - ցընը-
 58 նն: հը- մի ես - տա, խը - մի
 63 քիւղ - ցրը սի - նա- րի - նն թըղ կըտ-րա մի -
 64 չու - ցիդ է - լը սի-ն- քի - նն:
 67 հը - մի ես-տա, խը - մի քուղ - ցրը սի - նի -
 76 նն ձա - րը-ցուր մի - ցու - ցիդ
 77 ա - րին կա տա - նն: Թըմ-կը - նն կա զար-կը - վն
 77 ու գար - նի - նն աշ-գար ձև - նր
 86 սա - զուծ կա - սուծ նըր - նի - նն:

Երգ Մը Ազգագրական

Նոթագրությունը՝
Կարո Ասետեանի

$\text{♩} = 80$

5

9

15 **Առաջին Համար**

Օր մը եւս դուրս նըստած սը դիտե- ի մեր պարտեզ:

15 Ա. մատ էր հով մը կար Ա. րեւ մը տած էր մար:

17 Յանկարծ գըլ խուս վե- րէ- լեն վըգ, վըգ, վըգ, վըգ, ճայն մե կատ

19 մու- ժեղ մը ինք- նա հոգ քը- թիս վը- րայ փա- կաւ:

21

25 **Երկրորդ Համար**

Վեր- ջըն ալ տե- սայ որ քո լոր մար- միտն կոտ- րի- կոր

27 կար- ծես թէ վրաս ձիւ- նեց Ձիւ տաս- տիկ թող մը քրտ- նեց:

2

29

Հըն- կըն- զըն- կըր դո- դա- ցի- վեր- մա- կիս տաւ սո- դա- ցի

31

վեր- ջըն ալ բոո տին քին մէ- ջը լո- դա- ցի:

35

Երրորդ Համար

37

Հար- ցու ցի տոթ- թո- թին, մե- ժա- պատ- ուտթ- եան նո- թին,

39

ը- տա որ ա- սի- կա կը կոչ- ուի մա- լա ըի- ա:

41

ին- ձի տոթ- ուտ լե- դի դեղ եւ սի քա- նի ա- սեղ- ներ

43

ը- տա որ ա- սի- կա կը ը- թ- թե մութ- եղ:

Տանտիկին կ'ուզենք ¹⁶
[Վեր. Կոստան Մոմճեան]
Սա դուստրը մ'է ազնուատոհմ մեծատան Ուսած՝ ապրիլ կեանք մը փափուկ, պճնազարդ Ծնողք իր հետ մեծ գումարներ օժիտ տան, Թէ կամենամ կեանքի ընկեր ընտրել զայն: Բայց ականջիս տակ խօսի ինձ մի մեղմ ծայն՝ Բայց ականջիս տակ խօսի ինձ մի մեղմ ծայն՝ Կրկ. Մենք չենք ուզեր օժիտաւոր մ'օրհորդ. Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:

¹⁶ Չախչախեանի նոթատետրին մէջ այս երգին մասին գրուած է թէ «գրի առնուած է մայրերու օրուան առթիւ, 1955 Մայիս»: Այս երգը կը գտնենք նաեւ Արմենակ Արըզեանի (Տատեր) հեղինակութեամբ *Հազար ու մէկ ծաղիկ* վերնագրեալ գիրքին մէջ (Պոստոն, տպ. Հայրենիք, 1913, 132 էջ): Գիրքը կազմողը՝ Արմենակ Արըզեան, որ գիրքին մէջ հանդէս կու գայ նաեւ Տատեր (=ընկեր) գրչանունով, 1 Դեկտեմբեր 1913 թուականը կրող իր «Յառաջաբան»ին մէջ շնորհակալութիւն կը յայտնէ Հալէպի առաջնորդ Ներսէս եպս. Դանիէլեանի աջակցութեան, կը նշէ թէ գիրքին հատոյթին 25%ը պիտի յատկացուի «Ձեյթունի հայ վարժարանաց», աւելցնելով որ գիրքը դրուած է Թրոյի Հայ Առաքելական եկեղեցիի հոգաբարձութեան տրամադրութեան տակ:

Գրքոյկը կ'ընդգրկէ Արըզեանէն թրքերէն բանաստեղծութիւններ, տեսթաններ, հանելուկներ, խրատներ եւ այլ գրութիւններ՝ բոլորը թրքերէն: Գիրքին երկրորդ մասին մէջ կը հանդիպինք Դանիէլեան եպիսկոպոսի կաղանդէքներուն, նաեւ այլոց հայերէն ու թրքերէն չափածոյ գրութիւններուն: Այս խումբին մէջ կը հանդիպինք նաեւ Վեր. Կոստան Մոմճեանի գրած միքանի բանաստեղծութիւններուն, որոնցմէ մին է «Տանտիկին կ'ուզենք»ը, տպուած գրքոյկին 77-78 էջերուն: Շահեկան է այն որ 1910ականներուն շրջանառութեան դրուած բանաստեղծութիւն մը, որ շատ հաւանաբար երգուած ալ է, երգուած է նաեւ Այնճարի մէջ, 1950ականներուն: Բաղդատելէ ետք գրքոյկին բնագիրը այս ձեռագրին հետ, ի յայտ եկաւ որ ձեռագիրէն կը պակսի մէկ տուն:

Գրքոյկը մեր ուշադրութեան յանձնեց դոկտ. Արմէն Իւրնէշեան որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը: Գրքոյկը մատչելի է համացանցի վրայ, հետեւեալ հասցեով.-

https://books.google.com.lb/books?id=0odCAQAAIAAJ&pg=PA77&lpg=PA77&dq=%D5%8D%D5%A1+%D5%A4%D5%B8%D6%82%D5%BD%D5%BF%D6%80+%D5%B4%D5%A8%D5%B6+%D5%A7+%D5%A1%D5%A6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A1%D5%BF%D5%B8%D5%B0%D5%B4+%D5%B4%D5%A5%D5%AE%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6&source=bl&ots=WYNiyqX6kF&sig=ACfU3U3U0Gmk2ofLnObvQJbk1dsKj-FDqW&hl=en&sa=X&ved=2ahUKewjQg8_oI4uGAXXOUKQEHTG9CDcQ6AF6BAgJEAM#v=snippet&q=%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A5%D5%AC%D5%AB&f=false :

Եւ սա մին է գեղեցկադէմ, գեղանի Վեհ բնութիւնն կարծես օժտած է զանի Ահա քեզի գեղեցկութեան մի պատկեր Ալ ի՞նչ պակսի ընտրել զնէ ինձ ընկեր: Իսկ այն ծայնը կը փսփսայ ականջիս՝ Իսկ այն ծայնը կը փսփսայ ականջիս՝ Կրկն. Մենք չենք ուզեր սոսկ դէմքի փայլ սիրելի... Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:
Սա աղջիկ մ'է դպրոցական ուսանող, Ճարտար, խօսող, գրող, թէեւ չունի փող Դասատան մէջ փայլի որպէս մի արեւ, Ինձ ամէնէն յարմար կինը արդարեւ: Բայց ականջիս միշտ կը զարնէ այն խոլ ծայն՝ Բայց ականջիս միշտ կը զարնէ այն խոլ ծայն՝ Կրկն. Մենք չենք ուզեր գրել կարդալ միմիայն Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:
Սա աղջիկ մ'է դիրքով, տեսքով ինչ խոնարհ, Ոչ ուսանող, ոչ գեղանի, ոչ քնարահար Թէեւ՝ բայց նէ ընտանեկան Սուրբ յարկին Տակ՝ լաւ գիտէ ապրիլ որպէս տանտիկին: Չգիտեմ արդեօք ընտրելու՝ եմ նէ թէ՞ ոչ: Չգիտեմ արդեօք ընտրելու՝ եմ նէ թէ՞ ոչ: Յայնժամ այն ծայն մեղուկ մ'առնէ ինծի կոչ՝ Յայնժամ այն ծայն մեղուկ մ'առնէ ինծի կոչ: Կրկն. Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:

Հայր Ամերիկայում¹⁷	
Էս հակոտնեայ աշխարհում Ամենայն ինչ է փոխուել Կրօնք, լեզու, ազգութիւն Մոտայի է վերածուել: <i>Էս ի՞նչ է սա մոտա է:</i>	Հայ պատանին որ ըսեմ Նա գիտէ ամէն բան Դատարկ գլխով փաթաթէս Խօսքով փրկի Հայաստան: <i>Էս ի՞նչ է սա մոտա է:</i>
Եկեղեցի գնալիս Քաֆէ Շանթան է կարծում Ոտքը ոտքը վրայից Նա երբեք վար չի առնում:	Մէկն էլ տեսնես փողոցում Ոսկի ականոցը քթին Անգլիերէն է ջարդում Քծնող ժպիտն երեսին:

¹⁷ Գրութեան տակ դրուած է Անժէլ Էմմօղլեան անունը, որ հաւանաբար ընդօրինակողին, կամ արձանագրողին անունն է:

<i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>	<i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>
Հայ տիկինը իր զաւկին Անգլիերէն է խօսում Փափա, մամա, կոտ մորնինկ Անտէր թութակ ես դարձնում: <i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>	Հայ քարոզիչ պատուելին՝ «Հայաստանն է ուսացել» Վարդան Ներսէս Սահակին Նա բնաւ չի քարոզել: <i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>
Հայիոյում է Րաֆֆին Նրան սրիկայ է կոչում Դրանց փոխան Հիչքոքից Իտոտ ոռոճիկ է գանձում: <i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>	Դուք չէք տեսնի վարդապետ Լայն մօրութով ու վեղար Հագած ունի փրինս Ալպերթ Ու սիլինտըր ¹⁸ : <i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>
Նա չի պահում եւ Մեծ Պահք Ա՛խ, ստամոքսն է տկար Բայց ամբիոնից պահում ծոմ Քարոզում է անդադար: <i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>	Հայ օրիորդ նազելի Օ՛, շատ սիրում է թոման Սենեակումը հայելի Դէմքն է զննում անպայման: <i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>
Նա չի սիրում հայ տղայ Ասի՛ կարճ է, միաը՛ ցած, Սա տգեղ է, նա՛ աղքատ: Աչքն օտարին է տնկած <i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>	Թէ ուզում ես բախտ շինել Ճաշարանապետ կը լինես Բայց քիչ օրից անպատճառ Շունչդ Եգիպտոս կը քաշես: <i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>
Ճաշարանում շիք պարոն, Կոկոզավիզ, թեթեփկ Հոն պառկում է, հոն ուտում Վճարում է ապառիկ: <i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>	Եւ խօսում է ¹⁹ Պոնժուր միսիւ քեզ կ'ըսէ Բայց հենց իր պարտքն ուզես Քիթն ու բերանը կը կախէ: <i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>
Մի էլ տեսնես երկու հայ Ընկերութիւն են կազմել Բայց հաշիւներ քննելիս	Իրար գլուխ են պատռել: <i>էս ի՞նչ է սա մոտրա է:</i>

¹⁸ Մէկ անընթ. բառ:

¹⁹ Մէկ անընթ. բառ:

TWO ETHNOGRAPHIC-FOLK SONGS FROM ANJAR AND BEIRUT OF THE 1940S,
AND A FEW OTHER RHYMED WRITINGS/SONGS
(SUMMARY)

ANTRANIK DAKESSIAN
adakessian@haigazian.edu.lb

The paper introduces a number of songs and rhymed writings which were sung and recited among the Lebanese Armenian circles of the 1940s and 1950s.

The first is an ethnographic song from Musa Ler/Anjar. It is the song sung during the departure of the bride from her paternal home. Both the lyrics and music of the one published here are a variation of the one published in the ethnographic song book of Musa Ler/Anjar.

The second song, which is an unpublished song sung in the Jibeil Birds' Nest Orphanage and indeed in Anjar, too, during the 1940s and 1950s, is about the bite of the mosquito which causes malaria. The song describes the consequences of the bite of the mosquito and how the victim suffered and had no choice but to seek the advice of the doctor, who prescribed a number of injections, which eventually improved the health of the victim. The music of the song has been retrieved and published alongside the lyrics.

One of the three other rhymed writings, named "Dandigin Guzenk" (We Want a Housewife), was published in a book in 1913 in Boston. The last two, however, seem to be heretofore unpublished. The music for these three poems has not been retrieved so far.

The paper notes that all five of these songs were frequently sung in the 1940s and the 1950s in Lebanese Armenian circles.